Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի

Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19326/2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան — **26/05/2021**

1. **Հովակիմ Սիրեկանյան** ՀՎՀՀ **74371908**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **Գեղարքունիքի մ., գ. Կարճաղբյուր 8-41, 9տ.**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. **AH0246371**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 05.07.2019թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել ԱՏԳ ԱԱ 6309000000 ծածկագրին դասվող՝ 5,300 ռուսական ռուբլի (39,856 համարժեք ՀՀ դրամ) ինվոյսային արժեքով ապրանքատեսակներ, ինչի արդյունքում գերազանցվել է ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 865-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները (ԱՏԳ ԱԱ 63 (ենթադիրք՝ 6309000000) ծածկագրի համար՝ 50 կգ), ուստի Դուք՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր էիք ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի թիվ 865-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման համար հիմք են հանդիսացել ՀՀ հարկային օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները, որոնք որոշվում են համապատասխանաբար ապրանքը ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) կամ ապրանքը ՀՀ-ից արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձ Հովակիմ Սիրեկանյանի կողմից իրականացված վերը նշված ներմուծման գործարքի մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը՝ 35,971 ՀՀ դրամ [5,300/513x463x7.52/փոխարժեք/]

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով՝ 7,194 ՀՀ դրամ [35,971x 20%]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 2,765 ՀՀ դրամ (26/05/2021թ. դրությամբ) [7,194x264օրx0.075%]] + [7,194x 466օր x 0.04%]]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը (26/05/2021թ. դրությամբ) կազմում է՝ 9,959 ՀՀ դրամ [7,194+2,765]:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 26/05/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

Մաքսային մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն

7.Ընդամենը՝

8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Հայկուհի Կարապետյան